# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«13» նոյեմբերի 2025թ. N ՄՊ/969-Ա

ք. Արմավիր

**«ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ Վ. ՌՈՍՏՈՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍԱԹԻԿ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Սաթիկ Շահինյանի 2025 թվականի նոյեմբերի 11-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սաթիկ Շահինյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի նոյեմբերի 17-ից 28-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Սաթիկ Շահինյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Սուսաննա Մանուկյանին:
3. «Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Սուսաննա Մանուկյանի աշխատավարձի վճարումը 2025 նոյեմբերի 17-ից 28-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Սաթիկ Շահինյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի դեկտեմբերի 1-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**

Восстановимая подпись

X

Արամ Գրիգորյան

Подписано: GRIGORYAN ARAM 2509720082

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**